ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1379 28.10.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ՝
պարոն Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՍՍԻ
Գրանցման № 4583
28 10 2013

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Նոյեմբերյանի ՁՊՎ, արձանագրել է թերություններ և խախտումներ:

7263
29 10 13

Թերություններ.

1. Բնական և էլեկտրական լուսավորությունը թույլ էին: Երկուսի դեպքում էլ խոչընդոտ էր հանդիսանում վանդակաճաղերի մանր լինելը:
2. Խցերում առկա բարձի երեսները գտնվում էին կեղտոտ վիճակում:
3. Քննչական սենյակը և բուժսենյակը համատեղ էին և գտնվում էին փոշոտ վիճակում:
4. Քննչական սենյակի աթոռներից մեկը կոտրված էր, բացակայում էր բժշկական սավանը:
5. Սանհանգույցից ամբողջ ՁՊՎ-ով մեկ տարածվել էր տհաճ հոտ, այն աստիճան, որ ՁՊՎ-ի սկզբնամասում գտնվող քննչական սենյակում նստելը անհնար էր / սանհանգույցը գտնվում է ՁՊՎ-ի վերջում/:
6. Ըստ ՁՊՎ-ի պատասխանատու ոստիկանի, սնունդը բերվում է խանութից:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Խախտումներ .

1. Ըստ պատասխանատու ոստիկանների արտաքին զննությունը իրականացնում են իրենք և մարմնական վնասվածքներ հայտնաբերելու դեպքում, իրենք էլ արձանագրում են համապատասխան գրանցամատյանում: Դիտորդական խմբի այն հարցին, արդյոք բժիշկ հրավիրում են, մեկնաբանեցին, որ անհարժեշտություն չկա, քանի որ իրենք արձանագրում են բոլոր տեսանելի վնասվածքները:

   Արձանագրում ենք, որ ՀՀ ոստիկանության կողմից տրված հանձնարարականը չի պահպանվում համապատասխան բաժնի կողմից: */փաստը հաստատող լուսանկարներ – 4/*

2. Ինչ վերաբերվում է Դիտորդական խմբի կողմից առաջ քաշած այն հարցին, թե հեռախոսազանգի միջոցով ՁՊՎ-ում գտնվող անձի հարազատներին իրազեկելու կարգը ինչպես է պահպանվում, հերթապահ մասի պետի կողմից առանց որևէ մեկնաբանության, նշեց, որ չեն տեղեկացնում:

   Արձանագրում ենք, որ ՀՀ ոստիկանության կողմից տրված հանձնարարականը չի պահպանվում համապատասխան բաժնի կողմից:

3. <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում որոշ դեպքերում ՔԿՀ տեղափոխելու և ազատ արձակելու ժամերը չեն նշվում: */ փաստը հաստատող լուսանկարներ –5,15,16,17,18 /*

4. Ինչպես նշեցինք թերությունների մեջ, ըստ ՁՊՎ-ի վարչակազմի սնունդը բերվում է խանութից, բայց մեզ տրամադրեցին սննդի մատակարարման պայմանագիր որտեղ նշված չէ ոչ համարը և ոչ էլ կնքման ամիս – ամսաթիվը, միայն առկա էր որ պայմանագիրը ուժի մեջ է մինչև 25.12.2012թ*:/ փաստը հաստատող լուսանկարներ – 1,2,3/:* Ուշագրավը այն է, որ սննդի պայմանագիրը կնքված է ոչ թե ըստ անձերի քանակի և ըստ նախատեսված գնացուցակի, այլ պայմանագիրը կնքված է ըստ ամիսների / հուլիս ամսից մինչև դեկտեմբեր ամիսը/, որը Դիտորդական խմբի համար անհասկանալի է, քանի որ հուլիս ամսից մինչ այցելության օրը՝ հոկտեմբերի 22-ը ՁՊՎ-ում պահվել են 12 անձիք, որոնց սնունդ տրամադրելու հնարավոր տարբերակը 33 օր է և որի ընդհանուր գումարը կազմում է 22.770 ՀՀ դրամ: Ըստ պայմանագրին կից հավելված 2-ի հուլիսից մինչ հոկտեմբեր ամիսներրը գումարի չափը նախատեսված է եղել 204.000 ՀՀ դրամ, որով ոստիկանության բաժինը պարտավորություն է ստանձնել տրամադրել սնունդ մատակարարողին: Դիտորդական խմբի համար անհասկանալի է այն փաստը, թե ինչ հիմքերով է կնքվել պայմանագիրը ներկայացված ձևաչափով և հաշվարկները

ինչպես են կատարվում, այն դեպքում, երբ մեկ ամիս առաջ ներկայացրեցինք, որ ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Կապանի ՃՊՎ-ն ունի 92.400 ՀՀ դրամ պարք, որը չէր տրամադրվում, որի պատճառով պայմանագիրը խզվել էր, իսկ այս դեպքում նախատեսվածից մոտ 10 անգամ ավել ծախս է ցույց տրվում՝ անհասկանալի հիմքերով:

5. Գիվի Գրիգորիի Խուբուլավան – 17.04.2013թ-ին ժամը 19[35]-ից մինչև 23.04.2013թ-ը պահվել է ՃՊՎ-ում, և նրան ՔԿՀ տեղափոխման ժամը նշված չէ <<ՃՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում: */ փաստը հաստատող լուսանկարներ – 5/*

6. Զուրաբ Զուլլերի Բլիադզե – բերման է ենթարկվել Տավուշի ՄՎ Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունք 26.04.2013թ-ին ժամը 00[30]-ին: Ձերբակալվել է նույն օրը, ժամը՝ 02[35]-ին, Նոյեմբերյանի ՃՊՎ է ընդունվել ժամը 03[20]-ին: Անհասկանալի պատճառներով նրան արգելանքի վերցնելու պահի ժամը ըստ <<ՃՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի նշված է ժամը 01[30]: Ավելին՝ Զ. Բլիադզեն արդեն ձերբակալվածի կարգավիճակ ունենալով Բագրատաշենի բաժանմունքից Նոյեմբերյանի բաժին բերման է ենթարկվել, և կազմվել է <<անձին բերման ենթարկելու>> արձանագրություն:

Արձանագրում ենք, որ ՀՀ ոստիկանության կողմից տրված հանձնարարականը չի պահպանվում համապատասխան բաժինների կողմից:

Ավելացնենք նաև, որ Զ. Բլիադզեն ազատ է արձակվել ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Նոյեմբերյանի բաժնի պետի կողմից հիմք ընդունելով արգելանքի վերցնելու առավելագույն ժամկետը լրանալու փաստը: Որոշման մեջ արգելանքի վերցնելու փաստը ֆիքսված է 26.04.2013թ, առանց ժամը նշելու, իսկ առավելագույն ժամկետը լրանալու փաստը նշված է 29.04.2013թ ժամը 03[20], այն դեպքում, երբ նրան արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետը / 72 ժամը/ արդեն իսկ լրացած է եղել ժամը 00[30]-ին: Ներկայացնենք ուշագրավ մեկ փաստ, որ նույն օրը ՝ 29.04.2013թ-ին ժամը 18[30]-ին Զ. Բլիադզեն արդեն կալանավորվածի կարգավիճակով կրկին ընդունվել է ՃՊՎ: */ փաստը հաստատող լուսանկարներ –5,6.7.8.9,12 /*

7. Սորիդա Անահիդա Օնիկիս – բերման է ենթարկվել Տավուշի ՄՎ Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունք 11.05.2013թ-ին ժամը 21[00]-ին: Ձերբակալվել է նույն օրը, ժամը՝ 23[00]-ին, Նոյեմբերյանի ՃՊՎ է ընդունվել ժամը 23[45]-ին: Ավելին՝ նա արդեն ձերբակալվածի կարգավիճակ ունենալով Բագրատաշենի բաժանմունքից Նոյեմբերյանի բաժին բերման է ենթարկվել, և կազմվել է <<անձին բերման ենթարկելու>> արձանագրություն:

Ավելացնենք նաև, որ նա կրկին ազատ է արձակվել ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Նոյեմբերյանի բաժնի պետի կողմից հիմք ընդունելով արգելանքի վերցնելու առավելագույն ժամկետը լրանալու փաստը: Որոշման մեջ արգելանքի վերցնելու փաստը ֆիքսված է 11.05.2013թ ժամը 23^{45}, իսկ առավելագույն ժամկետը լրանալու փաստը նշված է 14.05.2013թ ժամը 23^{45}, այն դեպքում, երբ նրան արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետը / 72 ժամը/ արդեն իսկ լրացած է եղել ժամը 21^{00}-ին: Ներկայացնենք ուշագրավ մեկ փաստ, որ 15.05.2013թ-ին ժամը 18^{15}-ին նա արդեն կալանավորվածի կարգավիճակով կրկին ընդունվել է ՁՊՎ: */փաստը հաստատող լուսանկարներ –10,11,12,13,14/*

8. Սարին Խարիզ Վալերիանի – ըստ <<ՁՊՎ-ունմ պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ՁՊՎ է ընդունվել 16.05.2013թ-ին ժամը 18^{50}-ին: ՁՊՎ-ից 20.05.2013թ-ին ժամը 12^{20}-ին ինչ որ Առաքելյան ստացել է տվյալ անձին անհայտ նպատակներով և պարզ չէ թե նա որտեղ է տեղափոխվել և ինչ կարգավիճակով: */ փաստը հաստատող լուսանկարներ –14/*

9. Թամարա Գրիգորիի Քոչարյանը 07.07.2013թ-ին, Երվանդ Ռուբենի Թորոսյանը 10.07.2013թ-ին, Արթուր Ռազմիկի Թորոսյանը 10.07.2013թ-ին և Արտյոմ Ռոբերտի Սերոբյանը 09.09.2013թ-ին ՁՊՎ-ից ազատ են արձակվել հիմք ընդունելով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վարույթն իրականացնող մարմնի խափանման միջոց կալանք ընտրելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու որոշումը:

Այցելության պահին ՁՊՎ-ից բացակայում էին քննիչի որոշումները նրանց ազատ արձակելու վերաբերյալ: */ փաստը հաստատող լուսանկար –15/*

10. Գագիկ Գևորգի Սարգսյանը բերման է ենթարկվել Բագրատաշենի բաժանմունք 16.10.2013թ-ին ժամը 12.45-ին: Ձերբակալվել է ժամը 15.40-ին, ՁՊՎ է ընդունվել ժամը 16.25-ին: Ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի Գ. Սարգսյանի ազատ արձակելու օրը և ժամը նշված չէ, բայց առկա է որոշում Տավուշի մարզի դատախազի տեղակալ Ս. Անտոնյանի կողմից Գ. Սարգսյանին ազատ արձակելու վերաբերյալ, բայց Գ. Սարգսյանը ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի ազատ է արձակվել 19.10.2013թ-ին ժամը 14^{20}-ին, արդեն իսկ ձերբակալման առավելագույն ժամը լրացած, որը լրանում էր ժամը 12^{45}-ին: */ փաստը հաստատող լուսանկարներ –18,19,20,21,22/*

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ օբյեկտիվ գնահատական ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ.Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 3453 <<05>> 12 2013թ.

Ձեր 28.10.2013թ. թիվ 2621/1379 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ քննչական գլխավոր և Տավուշի մարզային վարչություններում կատարվել են ծառայողական քննություններ, որոնց կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Արձանագրված թերություններ.

1. ՁՊՎ-ի խցերի պատուհանների վանդակաճաղերը տեղադրված են եղել վարչական շենքի շահագործման ժամանակվանից, որոնք չեն խոչընդոտում բնական լուսավորության թափանցմանը, իսկ արհեստական լուսավորությունը ապահովվում է էլեկտրական շիկացման հզոր (300 ՎՏ) լամպերով:

2. ՁՊՎ-ի 2-րդ խցի բարձի երեսի կեղտոտ լինելու հանգամանքը ծառայողական քննության ընթացքում հիմնավորվել է:

3. Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի շենքային պայմանների պատճառով քննչական և բուժզննության սենյակները համատեղված են, ինչը խոչընդոտ չի հանդիսանում քննչական գործողությունների և բուժօգնություն ցուցաբերելու բնականոն գործընթացներին, իսկ սենյակը մաքրվում է ամեն օր:

4-րդ և 5-րդ կետերում նշված թերությունները վերացվել են:

6. ՁՊՎ-ում պահվող անձանց սնունդը բերվում է <<Նոյեմբերյանի կենցաղսպասարկում>> ՍՊԸ-ին պատկանող խանութից՝ պայմանագրի համաձայն:

Արձանագրված խախտումներ.

1. ՁՊՎ ընդունվելիս ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության բաժին է հրավիրվում բուժաշխատող, որը կատարում է բուժզննություն և արդյունքների մասին <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ

բուժօգնության>> գրանցամատյանում կատարում է համապատասխան գրառում և վավերացնում ստորագրությամբ: Վերը նշված հանգամանքների բացակայության պարագայում բուժզննության գրանցամատյանում ՁՊՎ ոստիկանը նշում է <<գանգատներ չունի>> և ստորագրում կամ ստորագրման տալիս ձերբակալվածին:

Ինչ վերաբերվում է ՀՀ ոստիկանության շտաբի պետի կողմից տրված հանձնարարականի պահանջը չկատարելուն, ապա հայտնում ենք, որ ՁՊՎ-ի ոստիկանի կողմից բուժզննության վերաբերյալ գրառումները կատարվել են 07.07.2013թ., իսկ հանձնարարականը տրվել է 13.07.2013թ.:

2. ՁՊՎ-ում պահվող անձանց հարազատներին հեռախոսակապի միջոցով իրազեկումները կատարվում են սահմանված կարգով, այդ մասին կազմվում է տեղեկանք և դրվում անձնական գործում: Հաճախ ՁՊՎ-ում պահվում են նաև օտարերկրացիներ, որոնց հարազատներին տեխնիկական պայմաններից ելնելով հնարավոր չի լինում իրազեկել, ուստի իրազեկումները տրվում են համապատասխան երկրների դեսպանատներին և ՀՀ ոստիկանության շտաբի պետի կողմից տրված հանձնարականի պահանջը չի խախտվում:

3. Դիտորդների խմբի կողմից արձանագրված այն փաստը, որ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում որոշ դեպքերում չեն նշված ՔԿՀ տեղափոխելու և ազատ արձակելու ժամերը, ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվել է:

4. ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու համար ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի և <<Նոյեմբերյանի կենցաղսպասարկում>> ՍՊԸ-ի միջև 06.09.2013թ. կնքվել է օրինակելի նոր ձևի թիվ 1 պայմանագիրը, որի հիման վրա իրականացվում է սննդի մատակարարումը: Նշված պայմանագիրը պահվում է բաժնի հաշվապահությունում, իսկ դիտորդների խմբին տրամադրվել է դրա նախնական (սևագիր) ձևը, որի վրա ամսաթիվը և համարը նշված չի եղել: Օրինակելի նոր ձևի պայմանագրում նշված է, որ սննդի համար տարեկան (այլ ոչ ամսեկան) կտրվածքով նախատեսված է 51.000 դրամ: Պայմանագրի համաձայն՝ ՁՊՎ-ում պահվող անձ-օր հաշվարկով, գործող սակագների համապատասխան գումարը փոխանցվում է սնունդ տրամադրող ՍՊԸ-ին:

5. Գիվի Խուբուլավան ձերբակալվել է 17.04.2013թ. ժամը 19.30-ին և ժամը 19.35-ին ընդունվել ՁՊՎ: Ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի Վ.Խուբուլավան 20.04.2013թ. ժամը 14.40-ին տեղափոխվել է դատարան և ժամը 18.42-ին որպես կալանավոր ընդունվել է ՁՊՎ, այնուհետև 23.04.2013թ. ժամը 12.25-ին Տավուշի մարզային վարչության ուղեկցող դասակի կողմից տեղափոխվել է Վանաձորի ՔԿՀ: Ինչ վերաբերվում է ՔԿՀ տեղափոխման ժամը <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում չնշելուն, ապա նշված մատյանի 9-րդ սյունակում (Նշումներ ձերբակալվածի տեղաշարժի մասին) այն չի պահանջվում:

Գրությունում նշված խախտումների 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերում, ինչպես նաև ՁՊՎ-ի 2-րդ խցի բարձերի երեսների կեղտոտ լինելու փաստերը կատարված ուսումնասիրությունների և ծառայողական քննության արդյունքում հիմնավորվել են, որի համար ոստիկանության մի խումբ ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ոստիկանության շտաբ